Երբ ամէն բան կախուած է լինում իր թելերից

Կիրակի, 21 Հունիսի 2015 09:40

Սրանից մէկ ամիս առաջ էր, երբ «Խամաճիկ» տիկնիկային թատերախումբը Պոլտաւայից տունդարձի օդային ճանապարհին՝ երկինք բարձրանալու նոր առիթ ունեցաւ: Առիթը՝ փառատօնի փակման հանդիսութեանը խմբի բացակայութեան ժամանակ մրցանակային անւանակարգում յայտնուելն էր, որտեղ հնարամիտ կատարման համար խումբն արժանացաւ՝ դիպլոմ-մրցանակի:

Զրոյց «Խամաճիկ» տիկնիկային թատերախմբի դերակատար՝ Ադդէ Բեգիջանեանի հետ

Սրանից մէկ ամիս առաջ էր, երբ «Խամաճիկ» տիկնիկային թատերախումբը Պոլտաւայից տունդարձի օդային ճանապարհին՝ երկինք բարձրանալու նոր առիթ ունեցաւ: Առիթը՝ փառատօնի փակման հանդիսութեանը խմբի բացակայութեան ժամանակ մրցանակային անւանակարգում յայտնուելն էր, որտեղ հնարամիտ կատարման համար խումբն արժանացաւ՝ դիպլոմ-մրցանակի:

Սա իր տեսակի մէջ արդէն երկրորդ միջազգային մրցանակն է, ինչ

«Խամաճիկ»-ը տուն է բերում Իրանի դրօշի ներքոյ: Առաջինը Հայաստանի Դսեղի «ԻԻՆԻՄԱ»-ինն էր, իսկ երկրորդը՝ Ուկրայինայի Պոլտաւա քաղաքի անունը կրող՝ «Զմիւռնիա Իշլիա»-ինը:
Սա ընդամենը առիթ էր զրուցելու խմբի գլխաւոր ղեկավար՝ Ալբերտ Բեգիջանեանի եւ իր որդու՝ Ադդէի հետ, ով նաեւ հանդիսանում է, որպէս «Մարշմալու» ներկայացման մենակատարը: Ի դէպ, հէնց նոյն այս ներկայացմամբ էլ խմբին յաջողուեց հանգրւանել Պոլտաւայի վերելքներում: Զրոյցը փառատօնի պատմութիւններից անցաւ անկախ խմբերի գլխին կախուած ֆինանսական խնդիրների, ինչպէս նաեւ հովանաւորներ գտնելու գործի բարդոյթներին: Իրավիճակ, որի ուղղութեամբ կարծես թէ չկայ համայնքային մասշտաբներով լուծումը տեսնելու յստակ մօտեցում: «Այնուամենայնիւ իւրաքանչիւր գործ ունի իր սկիզբը»,- այս մասին նշելով ասում է Ալբերտը յոյս յայտնելով, որ այս սկզբնաւորուող սաղմը դեռ աճելու եւ լոյս աշխարհ գալու հնարաւորութիւն կունենայ:
Յատկանշական է, որ Ադդէ Բեգիջանեանը 14 տարեկան է, եւ սովորում է «Մարիամ» հաստատութեան միջնակարգ օղակի առաջին բաժնում:

- Ես հէնց սկզբից դժւարացայ Պոլտաւայի տիկնիկային փառատօնի անունը արտասանել: Ինչ է նշանակում՝ «ԶՄԻՒՌՆԻԱ ԻՇԼԻԱ»-ն տանտէրերի՝ այսինքն ուկրայնացիների լեզուով:
Ալբերտ Բեգիջանեան- Անկեղծ ասած ես էլ չգիտեմ: Դա փառատօնի անունն էր, որը ոչ մի անգամ չհնչեց որեւէ մէկի լեզուից: Բոլորը փառատօնը ճանաչում էին հիւրընկալ քաղաքի՝ Պոլտաւայի անունով:

- Դուք ճանաչւում էք նաեւ որպէս Հայաստանի ՀԱՅՖԵՍՏ-ի եւ ԻԻՆԻՄԱ-ի ներկայացուցիչը Թեհրանում: Հետեւութիւն անելով այն բանից, որ իրանական խմբերը յաճախ Հայաստանի ՀԱՅՖԵՍՏ-ում երեւալուց յետոյ է, որ հնարաւորութիւն են ստացել դուրս գալու միջազգային բեմեր, Ճի՞շտ կը լինի արդեօք ասել, որ իրանական խմբերի համար Հայաստանի փառատօները ծառայում են որպէս թռիչքուղի:
- Չէի ասի որ բոլորի համար է այդպէս եղել, միեւնոյն ժամանակ արձանագրելով, որ քիչ չեն այն խմբերը կամ նոյնիսկ թատերական լուսանկարիչները, ում՝ ՀԱՅՖԵՍՏ-ն ու ԻԻՆԻՄԱ-ն ծառայել են, որպէս այդպիսին: Անուններ չտամ, բայց բարեբախտաբար մինչ օրս նրանք ամենուր նշում են ՀԱՅՖԵՍՏ-ի կարեւորութեան մասին:

- Հետաքրքիր է այն փաստը, որ նոյնիսկ ձեր խմբի՝ «Խամաճիկ»-ի դէպքում

նոյնն եղաւ: Այսինքն ներկայանալով Հայաստանի ԻԻՆԻՄԱ փառատօնին, այն նկատուեց ուկրայնական ներկայացուցիչների կողմից...
Ալբերտ- Ճիշտ այդպէս: Միջազգային փառատօնները ծառայում են միմեանց որպէս ճանաչում ձեռք բերելու հարթակ... դա ինչ որ չափով նաեւ օրինաչափութիւն է... Իհարկէ, «Խամաճիկ»-ը Դսեղում միանգամից նկատուեց ժիւրիների կազմում հանդէս եկած ուկրայնացի փորձագէտի կողմից, որից յետոյ էր, որ ստացուեց այդ անակնկալ հրաւէրը:

- Պոլտաւա մեկնելու համար գտա՞ք արդեօք հովանաւորներ: Եւ առհասարակ ի՞նչպէս է լուծւում փառատօներին մասնակցելու ընթացիկ ծախսերի խնդիրը:
Ալբերտ- Ցաւօք ո՛չ: Չգտնուեցին հովանաւորներ: Չգիտեմ ոնց պէտք է արձագանգել այս ամենին, բայց չէ-որ Իրանը ներկայացնող եւ մրցանակի արժանացած խումբը՝ այս դէպքում հայկական էր: Ու եթէ սա չի ներառւում մշակութային առումներով անհրաժեշտութիւն համարւող դուրս գրւող ծախսերի ու ծրագրերի մէջ, ապա միայն կարելի է ցաւել դրա համար: Էլ չասենք պաշտօնական շնորհաւորանքների կամ վերաբերմունքի բացակայութեան մասին: Այստեղ հարկ եմ համարում շնորհակալութիւն յայտնել իրանահայ մամուլին, որը հետեւելով իրադարձութեանը, գրանցւած յաջողութեան նկատմամբ վերաբերմունք դրսեւորեց, իհարկէ կատարելով՝ իր լրատուական առաքելութիւնը: Հանած ծախսերի հետ կապւած ծանր խոչընդոտը, պէտք է արձանագրել, որ Պոլտաւայում մենք ընդունւեցինք տեղը տեղին, որը պակսեցրեց մինչ այդմ եղած բոլոր յուզումները, ինչը գուցէ խանգարել կարողանար բեմ դուրս եկող պատանի դերակատարին, այսինքն՝ Ադդէին:

- Ադդէ, մինչեւ Պոլտաւա մեկնելը հասցրել ես բեմ դուրս գալ նաեւ Հայաստանի փառատօներում, ինչպէս նաեւ իրանահայ փոքրիկ բեմերի վրայ խաղալ քեզ բաժին հասած դերը: Սակայն Պոլտաւայում ներկայացումը գնաց անգլերէն լեզուով: Ի՞նչ դժուարութիւնների հանդիպեցիր այնտեղ: Եւ այն ի՞նչքանով էր տարբերւում մեր՝ իրանահայ հանդիսատեսից...

Ադդէ Բեգիջանեան- Ինձ ընդամենը քսան օր ժամանակ կար պատրաստուելու եւ դերը անգլերէնով կատարելու համար: Ամէն բան աւելի դժուարացաւ, երբ վրայ հասաւ տարեվերջի քննութիւններն ու պարապմունքների սեղմ ծրագիրը: Ամէն դէպքում հայրիկիս օգնութեամբ սեղմ գրաֆիկով աշխատեցի տեքստի վրայ եւ վերջապէս հասցրի անգիր պատմել ողջ ներկայացումը:

- Ո՞նց ընդունեց հանդիսատեսը:

Ալբերտ Բեգիջանեան- Շատ ջերմ: Մենք դիտել ենք բոլոր խմբերի ներկայացումները: Դա մեզ թոյլ է տալիս ասելու, որ մեր ներկայացումը լաւագոյն կատարումների շարքում էր: Մեր ներկայացման ժամանակ դահլիճում թափուր տեղ չկար: Նոյնիսկ կողք-կողքի կանգնած մարդիկ կային:

Ադդէ- Ինձ համար դա շատ լաւ փորձառութիւն էր: Ներկայացումը խաղում էի անգլերէն լեզուով, իսկ ներկաներն էլ կա՛մ անգլերէն լեզուի ուսանողներն էին կա՛մ էլ անգլերէնին ծանօթ աշակերտութիւն: Այսպէս մեր միջեւ գոյացաւ ինձ անհրաժեշտ այդ հաճելի կապը:

Ալբերտ Բեգիջանեան- Քանի որ ներկայացումն իր ձեւով այնպիսին է, որ պէտք է գոյանայ դահլիճ՝ բեմ անմիջական կապն ու յարաբերակցութիւնը, այդ

առումով կարելի է ասել, որ Ադդէին ոչ միայն յաջողուեց յաղթահարել օտար լեզուով հարազատանալու կատարման դժուարութիւնը, այլ նաեւ խաղալ բեմը՝ հանդիսատեսին կապող լարերի վրայ...

- Ի՞նչպիսի մեխանիզմներ պիտի գործեն, որոնցով հնարաւոր դառնայ անկախ խմբերի ներկայութիւնն ապահոված տեսնել այսպիսի փառատօներին:
Ալբերտ- Վաղուց արդէն անցել ենք կապերի հեշտացման եւ յարաբերութիւնների ժամանակշրջան: Եթէ ժամանակին նախաձեռնող կողմը խմբերի հարցով ստիպւած դիմում էր որեւէ երկրի դեսպանատանը, ապա այսօր հնարաւոր է ուղիղ կապերի միջոցով ուզածդ խմբին, առանց միջնորդների, տեսնել նախագծում: Սա նաեւ հնարաւորութիւն է տալիս ազատ խմբերին կամ նոյնիսկ անհատներին, ովքեր բեմ են փնտրում ասելիքը «խաղարկելու» համար բացւել միջազգային բեմերում: Շատ չխորանանք այն ուղղւածութեամբ, որտեղ ամէն բան պարզ է նաեւ ընթերցողին, այսինքն՝ արգելք համարւող արտօնագրերի երեւոյթի ուղղութեամբ...

- Սա նաեւ նշանակում է, որ չկա՞յ պետական բիւջէից ֆինանսաւորում կամ օժանդակութիւն...
Ալբերտ- Պատկերացրէք աւելի լաւ է այդպէս լինի քան՝ ստիպւած երկար սպասես, այն էլ անորոշ արդիւնքների հասնելու համար: Այսպէս գոնէ գիտես, որ կամ գտնում ես հովանաւորների, որոնք սատարելու են գոնէ ուղեւորավարձի հարցում, կամ՝ ստիպւած ծախսը վերցնում՝ քեզ վրայ աչքդ բացելով վաստակածդ արդիւնքների կամ անփոխարինելի փորձառութեան վրայ: Սա երեւի այն գինն է, որը պէտք է վճարես անկախութիւնը վայելելու համար: Այս մասին գրեթէ բոլոր խմբերը, որոնք փառատօների են մեկնում առանց պետական օղակների հովանաւորութիւնը վայելելու համակարծիք են...

- Չե՛ր այսինքն «Խամաճիկ» խմբի դէպքում գուցէ հնարաւոր լինէր հայթայթելու իրանահայ համապատասխան օղակների հովանաւորութիւնը...
Ալբերտ- Փաստը մնում է փաստ, որ մենք Պոլտաւայում Իրանի դրօշը, այդ էլ որպէս իրանահայի, ծածանեցինք մեր ծախսով, վերադարձանք լաւագոյն մրցանակով, մի խօսքով բարձր պահեցինք ե՛ւ խմբի ե՛ւ մեր երկրի պատիւը: Քաւ լիցի, ոչ մէկի երեսով տալու խնդիր չունենք: Իսկ հովանաւոր գտնելու եւ նման հաճոյքի արժանանալու առումով այսքանը՝ որ երբեք ուշ չէ, կարելի է դեռ թիկունք լինել խմբին, չէ որ արդէն մեզանից սպասելիք կայ: Պատրաստւում ենք բեմ բարձրացնել բազմաթիւ տիկնիկային նորառճ ներկայացումներ: Այնպէս, որ հովանաւորներ ունենալու մեր բոլոր դռները գտնւում են բաց վիճակում:

- Խումբը Պոլտաւայի փառատօն ներկայացաւ Շէլ Միլուերստայնի՝ «Լաւկադիօ» պատմուածքի հիման վրայ պատրաստուած՝ «Մարշմալու» ներկայացմամբ, որի թարգմանութիւնն ու ներկայացման համար համադրումը կատարել է հէնց ձեր միջոցով: Ներկայացման յայտագրում նշուած էր նաեւ, որ «Մարշմալու»-ն հնարաւոր է ներկայացնել երեք՝ հայերէն, անգլերէն եւ պարսկերէն լեզուներով: Ալբերտ- Պատրաստւում ենք ընդլայնել մեր գործունէութիւնը՝ դուրս գալով պարսկական բեմ ու շրջանակ: Այդպէս հնարաւոր կը լինի նաեւ իրականացուած տեսնելու պարսկերէն ներկայացման տարբերակը:

- Խօսենք հայկական շրջանակներում, միութիւններում կամ նոյնիսկ ազատ բեմերում երեւան գալու դժուարութիւնների մասին: Ի՞նչն է ամենաշատը նեղում ձեզ տարածել՝ իրանահայ բեմերում:
- Ես յաճախ Հայաստանից Իրան եկած խմբերի համար փորձում եմ ապահովել նաեւ իրանահայ լսարան: Նման գործընթացի ժամանակ է, որ ի յայտ են գալիս ծագած այնպիսի խնդիրներ, որոնք քեզ ստիպում են հէնց սկզբից մոռանալ միութիւնների հետ համագործակցութեան հարցը: Իսկ միութիւններն այնքան էլ անշահախնդիր չեն նման հարցերում: Դժբախտաբար նրանց այնքան չի յուզում բարձրորակ արուեստ ճաշակելու հարցը ինչքան՝ դրանից գոյացող շահը կը յուզի: Հայաստանից Իրան ժամանած այդ կարգի խմբերը, ունենալով Իրանի պետական օղակների հիւրընկալութեան առիթը, ծախսային առումներով չեն ծանրանում միութիւնների գլխին: Ընդհակառակը, այդ խմբերը ուրախութեամբ հանդէս կը գան մեր բեմերում, եթէ առիթների առումով ընձեռնուած լինի դիւրին վիճակ: Մեր խմբի ներկայացումների կապակցութեամբ էլ այսքանը, որ ամէն անգամ, երբ որեւէ միութեան ենք դիմել՝ նրանց առաջարկածներն ու ունեցած մօտեցումների երեւոյթն է զարմացրել մեզ: Մի փոքրիկ օրինակ նշեմ միայն: Մէկ անգամ մեր ներկայացրած դիմումին ի պատասխան առաջարկեցին՝ իրականացուող տօնավաճառների ժամանակ, այսպէս ասած, մեզ համար անկիւն ունենալ եւ խաղարկել մեր ներկայացումները: Ո՛ր վիրաւորական է՝ հաստատ: Սակայն ես չեմ, որ պիտի խօսի այս մասին: Գուցէ եւ զարմանալի չլինի, քանի որ, երբ նոյն միութեան յարկի տակ աշխատող խմբերի թատերական ներկայացումների ժամանակ, յայտարարւում է ընդմիջում եւ մարդիկ գնում են հիւրասիրուելու, բնական է, որ նման միջավայրում ներկայացուածը նոյնպէս թատրոն չես համարի: Բա ո՛ւր մնաց չորրորդ պատ հասկացութիւնն ու սինթեզուող կապը...

- Ապագայ ծրագրերի մասին...
- Շարժուելու ենք խմբի գործունէութեան եւ կազմի ընդլայնման ուղղուածութեամբ: Այս բոլորը, յատկապէս՝ եթէ ունես անկախ խմբի կոչում,

բնական է, որ նայելու է յաւելեալ ծախսերի, սակայն շրջանակը ընդլայնելը արդէն իսկ անհրաժեշտութիւն է թւում...

- Վերադառնանք Պոլտաւա: Նոյն ներկայացումը, եթէ Հայաստանի ԻԻՆԻՄԱ-ից տուն վերադարձաւ առանց ընդգծուած արդիւնքների, ապա Ուկրայինայից տուն բերեց «Հնարամիտ կատարում» դիպլոմ-մրցանակը: Որակական առումով փոփոխութիւն էիք մտցրե՞լ գործում:
Ալբերտ- Ո՛չ: Հայաստանում մեր ներկայացման մասին մեզ յայտնեցին, որ ժիւրին չի գտնում, թէ թղթատիկնիկներն ու դրանց խաղը կարող է համարուել՝ տիկնիկային թատրոն: Այն ինչ սա (թղթից պատրաստուած տիկնիկների խաղը) ճանաչւում է, որպէս՝ տիկնիկային թատրոնի ամենաերեւելի ոճերից մէկը: Այնպէս որ, եթէ Հայաստանում նոյնիսկ մրցոյթից էր դուրս դրուել «Մարշմալու»-ն, ապա այն Պոլտաւայում արժանացաւ լաւագոյն մրցանակներից մէկի, այսինքն՝ «Հնարամիտ խաղարկութիւն» դիպլոմի: Ինչեւէ... արւեստը մի գիշերւայ ընթացքում չէ, որ հնարաւոր է նորոգել մարդկանց գլխում...

Զրուցավար՝ ՀԱՏԻՍ

- «Խամաճիկ» թատերախումբ
- Ալբերտ Բեգիջանեան
- Ադդէ Բեգիջանեան
- «Հայֆեստ»

Հարակից Նյութեր

- 

Մեկնարկել է «Հայֆեստ» միջազգային 14-րդ թատերական փառատօնը

  ՀՀ Մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ, «Հայ դերասանների միութիւն» հասարակական կազմակերպութիւնը ս. թ. հոկտեմբերի 1-8-ը կազմակերպել է «Հայֆեստ» միջազգային 14-րդ թատերական փառատօնը, որը կրում է «Իրականացրու երազանքդ «Հայֆեստի» հետ» խորագիրը:

Ալբերտ Բեգջանեանի տիկնիկային ներկայացումը՝ Իրանի «ՄՈԲԱՐԱՔ» փառատօնում

Չեխովի «Շնիկով կինը», որը Ալբերտ Բեգջանեանի ձեւակերպմամբ պատրաստուել է տիկնիկային խաղարկութեան ձեւաչափերին համապատասխան, բեմականացուելու է Իրանի «Մոբարաք» տիկնիկային փառատօնում:
Ալբերտ Բեգջանեանը «ԱԼԻՔ»-ին յայտնեց նաեւ, որ «Ճամբրուկն ու փիսօ՝ շնիկը» իր առաջին ռեժիսորական փորձն է Իրանում, որի համար չի թաքցնում իր ուրախութիւնը:

Աղդէ եւ Ալբերտ Բեգիջանեանները Իրանի դրօշը կրելու են Ուկրայինայում

Ուկրայինա մեկնեց իրանահայ «Խամաճիկ» տիկնիկային թատերախումբը: Պոլտաւայում մեկնարկած «Լոդստար» տիկնիկային միջազգային փառատօնին Իրանը ներկայացնող՝ հայկական «Խամաճիկ» թատերախումբը բեմականացնելու է Շէլ Սիլւերստայնի՝ «Լաւկադիօ» պատմուածքի հիման վրայ պատրաստուած «Մարշմալօ» ներկայացումը:

Միմոս՝ թելից կախուած երջանկութիւն

Վերջերս Թեհրանում տեղի ունեցած «Մոբարաք» տիկնիկային փառատօնում Հայաստանը ներկայացրած ՄԻՄՈՍ տիկնիկային թատրոնը ներկայացումների մասնակցեց նաեւ թեհրանահայ բալիկների համար: Սա առիթ էր իրանահայ մանուկներին եւս հասանելի

դարձնելու «Մարիոնէտ» երեւոյթն իր ֆիզիկա-հոգեբանական բոլոր յատկանիշերով:

«Միհր»-ի ներկայացումը՝ «Կոմիտաս» սրահում

Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան Արեւստից միութեան նախաձեռնութեամբ, ուրբաթ յունուարի 17-ի երեկոյեան, «Արարատ»-ի կենտրոնատեղիի «Կոմիտաս» սրահում բեմական ներկայացում ունեցաւ Հայաստանից ժամանած «Միհր» թատերախումբը:
Խումբը նոր ոճով ու եղանակով ներկայացրեց՝ «Կոմիտասի 10 պատուիրանները» եւ «Գոյներ»-ը: